

URUK

Դու րա գացած իրագրայ ճանրու
ծախքը խմբարու թե հան վրայ է :
Լրագրայ վերադրեալ նստախ
համ որ ե իցէ գրութիւն խմբագիր
— չնար նին պիտի ուզուի , Ղալա
— թիւն Սանտարքըրու . ճատախի թիւ
198 , Նորո թան , Մարտիի գրատնն
եակը :
Ճատարք ծախքը չճանրուած նս
տախ չնդուծուի :

ᐱᐅᐅᐅᐅᐅᐅ

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ, ԵՎ ՏՆՏԵՍԱԿԱՆ

Palmer, R.

պիտի սկսի , և Սյրթէֆանոսի դաշնադրութեան սահմանած եռամսեայ շրջանին մէջ պիտի վերջանայ եղբւր : Յուսարի է որ Մեծ-Եպարքոսին կը աւրուկ բնաւորութիւնն այս ամեն կընծաւից խնդիրներուն արագ վախճան մը կուտայ , և երկիրն ոգի կառնու : քանզի քանի որ Ռուսք Սգրիանու պոյի բանակին , կատարեալ խաղաղութիւնը վերադարձած չը համարուիր , և Բ. Գուռը կը պարտաւորի մեծ բանակ մը պատերազմական վիճակի մէջ պահել , ամբողջ իշխներ շինել տալ և սպառազինութիւններ ընել : Զինադադարի ժամանակէն մինչև հիմայ քան և ինն շոգեանա Սմերիկայէն ու Եւրոպայէն Մարթինի-Հանրի հրացաններ , Քրուքի թնդանթներ և ռազմավերք բերած են , որոց գինը կանխիկ և ոսկի վճարուած է : Ասոր համար չաբաթն հազիւ յիսուն հազար Օսմանեան ոսկի կը բաւէ , և այսպիսի ստիպողական ծախսոց հետ անհնար կը լինի ներքին բարեհորդումներ գործադրել , և մանաւանդ ելումուտաքը կանոնաւոր վիճակի մէջ դնել , որ ամեն բարենորոգմանց հիմն է : Զինուորական պիտոյից համար երկրին շատ մը նաւահանգիստներէն արմուիք դուրս ելնելն արգելուած է , հետեւաբար արմատաւոր վաճառականութիւնը մեծ մասամբ դադարելով՝ օտար երկիրներէ ստակի ներածութիւնն այլ կը դադարէ :

Որեւելեան Բումբէլիի մէջ Պուլլարները կը շարունակէն իրենց յուզմունքը՝ Պուլլարիոյ հետ միանալու համար։ Կը, յիշեն ընթերցողք թէ Եւրոպական, յանձնախորհուրդն Օսմանեան Պանդային գործով կատարներէր Գերմանացի Պ. Շմիտ անուն անձը նա հանդէն ելումովի տեսուչ կարգեց Ռուսք այս որոշման ընդդիմացան։ Պուլլարները չէին հաւաներ դանձալին սնտուկը Պ. Շմիտի, յանձնել բայց վերջապէս յանձնախորհուրդն, յալու զեցաւ իւր որոշումն, յարգել տալ։ Հեռուովի կը ծանուցանէ թէ Պ. Շմիտ՝ Անդգիացի Լորտի մը հետ՝ իւր յիշատակութեան ներքեւ եղած տեղերը պարտով, գանձային սնտուկներն ու տուժարներն ալքէ անցունելու դեր է, բայց Խապէօյի Պուլլար գաւառապետը չէ ճանչեր դայն, և հարկ եղեր է Ռուսաց Սթոլիբին զորավարին խորքել։ Զորավարն հըրհանգ զրկեր է Պուլլար գաւառապետին։ Եսկայն այս վերջինն առարկելով թէ եկած հրահանգը բացօրոյ չէր, դարձեալ դիմադրութիւն ըրեր է։ Պ. Շմիտ և Անդգիացի Լորտը անկէ Սիբիր գնացեր են։ Հոն պաշտօնատարք զիրենք ճանչեր և սնտուկն ու տուժարներն ներկայացուցեր են։ Բայց յանկարծ բազմութիւն Պուլլարներ յարձակելով սնտուկը գր

բուսեր են, և Պ. Շմիտ ու իւր ըն-
կերակից Լորտը՝ Բլովաիվ(Պոսլարաբ
լեզուով) դառնալու պարտաւորուե-
ր են։ Այս Արեւելեան Բումբէլի խնդիրն
իրօք բաւական ծանր է ։ Պոսլարաբ
կըլայտարարեն թէ զինուք պիտի
գինադրեն՝ եթէ Օսմանեան զօրքն ի-
րենց դաւառը մտնէ ։ Թէ բնաւ չեն
հաւանիր որ Բ. Դուռը Պալքաննե-
րուն վրայ ամրութիւններ շինել տայ ։
Թէ երբեք Օսմանեան պաշտօնատար
չպիտի ընդունին ։ Վերջապէս Արեւել-
եան Բումբէլի և Պոսլարայի միացու-
մը կը խնդրեն ։ Նոր արեւնհեղու-
թեանց պատճառ չտալու համար
այս խնդիրը նկատողութեան արժա-
նի է, և դուցէ ասոր համար է որ
հեռագիրը կը ծանուցանէր թէ Անդ-
ղիա և Ռուսիա Արեւելեան Բումբէլի
և Պոսլարայի միացման համար կը
բանակցին ։ Բայց այս լուրը տակաւին
անհաւատալի կ'երեւի մեզ, քանզի Ա-
րեւելեան Բումբէլի կազմութիւնը Պէր-
լինի Վեհաժողովին մէջ Անդղիոյ ա-
ռաջարկութեամբ եղած էր, և Լորտ
Պիքսոնֆիլտի աշխարհափարութեան
մէկ յաղթանակը կը համարուէր ։
Այսու ամենայնիւ այսպիսի հակա-
ստութիւններ շատ տեսնուած են, և
օրինակներն հազուադիւտ չեն ։ Աֆ-
ղանստանի և Կերբոնական Ասիոյ վը-
րայ ևս երկու տէրութիւնք բազմա-
թիւ թիլթակցութիւններ փոխանակած
էին, և որոշուած էր որ երկու կողմի
սահմանաց մէջ չեզոք գլիծ համարուի
Աֆղանստան ։ Բայց թայմը լրողելին
իւր վերջին թիւերէն միոյն մէջ հա-
ւանական կը կարծէ որ Անդղիոյ և
Ռուսիոյ Ասիական սահմաններն յա-
րակից լինին, և այս պարագայիս մէջ
պատճառ մը չտեսներ կռուելու, ինչ-
պէս իւրուպիոյ մէջ Գերմանիոյ, Աւստ-
րիոյ և ուրիշ տէրութեանց սահմա-
նայեցիկութիւնը թշնամութեան պատ-
ճառ մը չէ ։ Անդղիական թերթն այս-
պիսի սահմանակցութիւն մը քաղա-
քակրթութեան առաւել նպաստաւոր
կը կարծէ ։

Հեռագիրը զարմանալի լուր մը կուտայ : Ռուսիա 'ի մօտոյ սահմանադրութիւն մը սխիտի հաստատէ եղբր՝ նախարարաց պատասխանատուութեան սկզբունքով : Այս լուրն հաւանական կը թուի մեզ : Ռուսիոյ մէջ ազատական մեծ շարժում մը կար . «Ունչական» ըսուած կուսակցութեան յաւումներն յայտնի է , որոյ պատճառաւ ոստիկանութիւնն յաճախ ձերբակալութիւններ ընելու կը պարտաւորէ : Կայսրը Մօսկուայէն անցած տամանակ Բրեմսիլինի մէջ ատեսախօսութիւն մ'ըրաւ , ուր Ռուս ժողովրդեան անցեալ պատարարովն ժամանակ ըրած զոհողութիւններէն դռնօրէն յայտնելով , որբայ երկրասարդութեան յեղափոխական շարժ-

մանց և ձկտումներուն վրայ, որք Ռուսիոյ զօրութեան սպառնալիք մ'են ապագային մէջ, երիտասարդութիւնը բոլոր մ'նտորադրեց գահաժառանգ Մեծ-Դուքսին ներկայացը ներլու համար, սակայն ոստիկանութիւնն այս ցոյցին առաջըն առաւ։ Այս յուշմանց նայելով՝ Ռուսիոյ համար ևս սահմանադրական վարչութեան ժամն հասած է։

ՀԵՌԱԳՐԱԿՑՆԸ ԼՈՒՐԵՐ

Երեսփոխանաց ժողովն 227ի դէմ
328 ձայնիւ մերժեց կառավարութեան
աշխարհավարութիւնը պարսաւելու
առաջարկը, զոր Պ. Վուրթէպրիտ ե-
րեսփոխանը ներկայացուցած էր :

վիճաբանութեան միջոցին ելու
մըտից նախարար Սըր Ս. Նօրթքօթ
խոստովանեցաւ թէ կառավարութիւ
նըն Սֆրանստանայ նկատմամբ մինչև
յարդ քունած աշխարհավարութիւ
նը մէկ կողմ՝ թողած է , բայց յայտա
րարեց թէ այս փոփոխութիւնը վեր
ջին անցքերն հարկ դրէր էին կառա
վարութեան վրայ՝ պետութեան շա
հուն և ապահովութեան համար :

Սըր Ս. Նօրթքօթ Ռօտօրի գաղ-
թականայ թշուառութիւնն ավտիւնը
համար վարկ (գրամ) պիտի լինէրէ
Ժողովէն :

Ժէլաւապատի (Ո.Ֆրանստան) իշխանութիւններն ու բնակչայ գլխաւորները Տաքքայի բանակակիւղքոններով Տնադանդու թիւնն միանդեմանի իրենց ծառայու թիւնը նուիրեցին :

Ռուսներին զորավարը Շիւթերկար-
տանի բարձունքը հասաւ։ Շիւթեր-
կարտանի բոլոր ցեղերը բարեկամու-
թիւն ցոյց տուին անոր։ Յիշեալ զօ-
րավարն Ալեքանդր վերադառնալու կը
պատրաստուի։

Ժէլաւապատի վրայ քաւոյ զօրա-
բաժինն յիշեալ քաղաքը գրաւեց :
Հռոմ 14 դեկտ.

ըտրութեան հրաժարականն ընդունելով՝ Պ. Տէրբէթիսի յանձնեց նոր նախարարութիւն մը կազմել :

Թաղ ու հին անձնական տկարու-
թիւնն ունի :

Երեսփոխանությունն մասնատոր
հուրդը Պերլինի գաշնադրությունը
քննելով՝ առանց պայմանի ընդունե-
լու որոշում տուաւ . հետեալաբար կա-
ռավարութեան աշխարհավարութիւ-
նը պարտաւելլա միտում ունեցող ա-
ռաջարկութեանց ամենն ալ մերժե-
ւեցան :

Բեդրոսյանի 14 դեկտ. կը հաւատարմութիւն մօտ ժամանակէն պատասխանատու չափաբարութեամբ սահմանադրութիւն մը պիտի հրատարակուի Ռուսիոյ մէջ :

Փարիզ 14 դեկտ. Եւրոպայի ժողովին մէջ արտաքին գործոց նախարար Պ. Վատինսկի-թոն ըսաւ թէ Յունաստանի խնդիրը պաշտպանեց, որովհետեւ հաղորդող չափն այդ երկիրն ալ նպաստաւորել կը պահանջէր : Հիշենական խնդրոյն նկատմամբ հանած շրջաբերականին վրայ խօսելով յայտնեց թէ միւս տէրութեանց գործակցութեան վրայ ապահովութիւն տրուած է հաղորդող : Վերջապէս կըսէ թէ Հիշենական խնդրոյն լուծումը մեծ չափ ունի Դրան համար, որ իւր կենդանի ուժերը զարգացնելու և թուրքիոյ բարեաւանդման ապահովելու համար խաղաղութեան ու անդորրութեան պէտք ունի :

Եւրոպայի միմտական դատական և արտաքին գործոց նախարարութեանց պիտոժենքն ընդունեց : Բոլոր Դադողի մէջ ձեռն կուգայ փարիզի մէջ ցուրտը սաստիկ է : Քաղաքում 15 դեկտ.

Անգղիոյ կառավարութիւնը վերջնադիր մը զրկեց Ձիւլիւսայ թագաւորին :

Փարիզ 15 դեկտ. Նույն թան լրագիրն հեռագիր մը կը հրատարակէ ծանուցանող թէ Ձիւլիւսայի մէջ ապստամբութիւն մը կը ծագէ :

Տարմէթատ 15 դեկտ. Այս մեծ դքսուհին մեռաւ :

Փարիզ 15 դեկտ. Տէպա լրագիրը կըսէ թէ Անգլիա Օսմանեան փոխառութիւնը պիտի երաշխաւորէ իսթանբուլի նաւահանգիստն ստանալով, որ մինչև Պարսկական ծոց շինելիք երկաթուղւոյն գծին իր սկզբնական պիտի ծառայէ :

Բէշթատ 15 դեկտ. Հունգարական պատուիրակութեան ժողովը Պոստիայ և Հէրոսքի գրաւման համար յառաջիկայ 1879 տարւոյն մէջ խնդրուած վարկին վրայ սկսած վիճաբանութիւնն երկու նշոտի մէջ վերջացուց երէկ : Անտրաշի կումին մէկ երկար ատենաբանութեան ընթացքում, որով կառավարութեան աշխարհավարութեանը դէմ ընդդիմադիր աստեղաբանից փաստերն հերքեց, ժողովն ստուար մեծամասնութեամբ ընդունեց յանձնաժողովին առաջարկութիւնն, որ քսան միլիոն ֆիօրին տալու կը յանգի :

Այս ատեն Կոստանթնուպոլիս

Լոնտրա 16 դեկտ. Երեսփոխանաց ժողովին մէջ Սըր Ս. Նորթքոթ հարցման մը պատասխանելով Դրան հետ նոր դաշնագրութիւն մը կնքելու և կիպրոս կղզւոյն վերջնական կերպիւ ստացման համար բանակցութիւններ ընելու զրոյցները սուտ հանեց :

Կառավարութիւնը Ռոտթեր արքայազնութեան զոհ եղողներուն համար դրամ խնդրելու գիտաւորութեան հետ կեցաւ :

Պուրէշ 16 դեկտ. Թուրքիոյ դեսպան Սիւլէյման պէյ այսօր Բուսանիոյ իշխանին ներկայացաւ իւր վկայագրերը մատուցանելու :

Բէշթատ 16 դեկտ. Հունգարական պատուիրակութեան ժողովը հաւանութիւն տուաւ Աւստրիական պատուիրակութեան ըրած որոշման, որ հետեւեալադրաց հարկերապետներուն ձեռնադրարեւելու և պատերազմական նոր նաւ մը

շինելու համար խնդրուած արտաքին կարգի ծախքը կը զլանայ : Սոյն որոշումէն ետեւ երկու պատուիրակութիւնք ալ իրենց նիստն օրաձգեցին : Լոնտրա 16 դեկտ.

Սըր Ս. Նորթքոթ յայտնեց այսօր երեսփոխանաց ժողովին մէջ թէ հասարակաց կարծեաց անհամաձայնութեան առջև Ռոտթեր արքայազն վիճակն սփոփելու համար ներկայացվարկի առաջարկութիւնն ետ կառնուա :

Ժողովն իւր նիստը մինչև փետր. 13 օրաձգեց :

Լոնտրա 16 դեկտ. Օտմ. Բոնա. 44 13/16
Փոխ. 1865 44 3/4
» 1869 44 1/2
» 1871 53 1/4
» 1872 22
» 1873 42 3/4
» Եղիպտ. 69
Անգլ. Բոնա 94 9/16

Փարիզ 16 դեկտ. Օտմ. Բոնա. 42,2 1/2

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Կայսերական հրամանաւ՝ Ներքին գործոց նախարար Խուրշիտ փաշան Էնկիւրիի Կըստիկ անուանեցաւ :

Պատրայի կառավարչութիւնը նորէն կուսակալութեան փոխուելով՝ նախկին կուսակալ Ապտուլլահ փաշային յանձնուեցաւ :

Արտաքին գործոց նորընտիր նախարար Վոնմ. Ալէքսանտր Գարաթոտորի փաշան չաբաթ օրը Կ. Պոլսի հասաւ Խարքուէական Խամայի շոգենաւով, և անմիջապէս Նըլաքի պալատն երթալով վեհ. Սուլթանին ներկայացաւ : Անտի Բ. Դուռն երթալով՝ Մեծ-Եպարքոսին հետ տեսակցելէ ետեւ՝ իւր պաշտօնին գլուխն անցաւ :

Կայսերական անձնական գանձուց վերատեսչութեան պաշտօնատունը որ փողերանոցէն Պէշիկթաշ փոխադրուած էր, նորէն փողերանոցը վերադառնալով, Պետական Խորհրդոյ ժողովատեղին ալ վերստին Սուլթան Մահմուտի դամբարանին դիմացը Տար իւլ Ֆունուն փոխադրեցաւ :

Եւրոպայի նախարարութեան առաջին թարգման Գրիգոր Էֆէնտի-ին երկրորդ կարգի և նորա օգնական Միկրիշ Էֆէնտիին երրորդ կարգի պաշտօնատարութեան աստիճան տրուեցաւ :

Վեհ. Սուլթանն երկու զոյգ անգղիական ընտիր կառաձիգ երկվար և երեք ալ գեղեցիկ հնձեւածի իրենց ամեն կազմաններով Մեծ-Եպարքոսին, վեց ձի ալ նորա պաշտօնէնց պարգեւեց :

Սթանբուլ արքայազն Սպտիւլ Բէրիմ, Բէտիֆ, Էլէնքի, և Մահմուտ փաշաներուն, ինչպէս նաև Ֆէրիդ Ահմետ Համաի, Մէհմետ Խուրուսի և Սաֆիէթ փաշաներուն Հռոդոս կղզին երթալ նստելու հրաման տրուեցաւ :

Շաբաթ օրը Մեծ-Եպարքոսն և ոստիկանութեան նախարար Սաֆիէթ փաշան ոստիկանութեան բանտերն աչքէ անցուցին : Բարձր, խայրէտուն փաշան պատուիրեց բանտադաշտաց, որ օրէնքէ դուրս խտուածիւններ չգործածեն բանտարկելոյ վրայ, այլ՝ ընդհակառակն՝ քաղցրութեամբ վարուին :

Ոստիկանութեան նախարարն ալ ազատութիւն շնորհեց յիսուսի չափ

բանտարկելոյ, որոյ բանտարկութեան պայմանաժամը լրացած կամ լրանալու մօտ էր :

Ոստիկանութիւնն անցեալ շաբաթու քանի մը դրամանեց բռնեց, որք արծաթ մէճիաիէ կը շինէին :

ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼԻՍ

Է Ս Չ Ա Մ Ը Ո Ւ Մ Ո Ւ Մ Ի Է
4 դեկտ. երկուշաբթի իրիւրն 42,38
5 դեկտ. երեքշաբթի առաւօտ 42,38
Բացուեցաւ 42,36
Կէս օրին 42,36
Բուլկի երկաթուղի Գր. 45 50
Թղթաղամ Լր. 368

ԸՆԹԱՅԻՆ ԱՐԺԵՂԱԹՈՑ

Կ. Պոլսի 4 Դեկտեմբեր
Սուլթան Էնկիւրի Բոմ. Անգլ. Լր. 4,20
» Գոստաւուլեմ Բոմ. 3, 5
Կ. Պոլսի Պաշային 6, 5
Քրէտի Էնկիւրի 4,38
Քրէտի Օսթրո-Թուրք Գր. 70
» 1863 70
» 1865 73
» 1869 70
» 1872 24 3/4
» 1873 64
Թրամուայ Օտմ. Լր. 4 50

ԸՆԹԱՅԻՆ ԴՐՈՄՈՑ

4 Դեկտեմբեր
Անգլ. Լր. 409 4
Նարոյնն ոսկի 87 3
Խմէնիալ Ռուս 89 8
Գըլըմից 51 10
Հինգ ֆրանք 122 20
Հինգ ցոց 179

Ա.Զ.Գ.Ա.ՅԻՆ

Ինչպէս որ ծանուցած էինք շաբաթ առաւ թուով, նոյն օրը Ս. Պատրիարք հայրն անձամբ Մեծ-Եպարքոսին և Բ. Դրան միւս նախարարաց երթալով, թէ՛ ի Մարաշ և թէ՛ ոստիկանութեան դուռը բանտարկեալ Ունեցի ազգայնաց անմիջապէս ազատութիւնը խնդրեց՝ դիմել տալով մի անգամայն որ թէ՛ Ունեցիք տէրութեան գէմապատմաբան Խորհուրդունեցած լինելին, խօզանի ապստամբութեան միջոցին քանիցս իրենց եղած հրաւէրն անշուշտ կընդունէին : Բայց անոնք Պատրիարքարանի միջոցաւ իրենց արտունջներն ու գանգատները Բ. Դրան ներկայացնելէ զատ մինչև հիմա՝ և էլ յանգուզն փորձերու ձեռնարկած չեն, և այլն :

Երեւալ ազգայնաց ընդհուպ արձակման համար հաստատուն խոստում ստացաւ Ն. Սրբազնութիւնն : հետեւաբար կը յուսացուի որ այսօր վաղը կարձակուին :

Խալիլի վեհ. թագաւորին անձին գէմ կատարուած սպանութեան փորձին առթիւ Ս. Պատրիարք հօրաւ Խալիլական Վոնմ. գեղարանն ուղղած խնդակցութեան գրոյն ի պատասխան՝ Ն. փոխութիւնն ալ հետեւեալ շնորհակալութեան գիրը զըրկած է :

« Սրբազան Հայր :

« Ստացայ նոյն 25 թուականաւ Ձեր Սրբազնութեան նամակը՝ զոր պատիւ ըրած էիք ուղղել ինձ յանուն Հայ ազգին, խորին ցաւ յայտնելով Օգոստ. Տիւրքի խալիլի վեհ. թագաւորին՝ անձին վրայ կատարուած վատ սպանութեան փորձին համար, և վիշտելով թէ Ձեր բովանդակ Ազգը կը միանայ Ձեր Սրբազ-

նութեան հետ շնորհակալութեան մարմնակերպ ուղղելու երկնից, որ հաճեցաւ պահպանել Ն. Վեհափառութեան թանկագին կեանքը :

« Փութեցի Ձեր Սրբազնութեան բարեմարտութիւններն ու իղձերն հաղորդել վեհ. թագաւորին կառավարութեան, որ աներկապ եմ թէ բարձր արժէք մը պիտի տայ այն համակրական զգացմանց՝ որոյ թարգմանը բարեհաճած է լինել Ձեր Սրբազնութիւնն յանուն ազնիւ Հայ ազգին :

« Կաղաչեմ զՁեր Սրբազնութիւնն՝ որ բարեհաճիք ընդունիլ իմ ամենաբարձր մեծարանաց հաւատարմութիւնը :
(Սրբաբարձրութիւն)

Տփլիսի Մշակ օրագրին մէջ հետեւալ ուղագրաւ նամակները կը տեսնենք :

Երգրում 20 հոկտ.

Այսօր ունեցայ այցելութիւն Խամայի փաշայի և Մուսա Կուստուլուպի հետ, որոնցից առաջինը Հայաստանի վարչական կառավարչն է, իսկ երկրորդը զօրաց հրամանատարը : Երկուսի համարաւ ալ շատ էի լատմ. վստահութեամբ հետաքրքրելի նրանց տեսնելուն : Խամայի փաշան յայտնի է մեր մէջ իբրեւ Տէր-Ղուկասովի արժանի հակառակորդ անցեալ պատերազմի ժամանակ, ևս իբրեւ ճարտարաբան և քաղաքաբան Տաճկաց գեներալ : Իսկ Մուսա փաշա Կուստուլուպ իբրեւ ամենայայտնի մարդ Տաճկաստան գաղթած լեռնականներէց, նա ունի գեներալ-մայորի աստիճան երբ անցաւ Սուլթանի ծառայութեանը : Կոչվեց իր փաշա. նա յայտնի է ևս իբրեւ ռեբիւթ թշնամի կամ Լորիս Մէլիքովի, որին պատերազմի սկզբում երգվել էր կամ կենդանի բռնել կամ սպաննել : Բայց Աստուած այնպէս անօրինեց որ կրնար առաջին յաղթութիւնը ունեցաւ նորա վրա, որը Բէլլի-Ահմէտ Հայաբնակ գիւղի մօտ շարք ու վաղը լինելով՝ միանգամայն կորցրեց իւր նշանակութիւնը պատերազմի բոլոր ընթացքում, և նշաւ նաւոր երեւոյթ՝ նորա դէմ յայտնվեց իր քաղաքական նորա մօտիկ ազգական Տէր-Քազմի կապիտան Կուսով : Ահա՛ սոցա հետ ինձ վիճակվեցաւ զորք ունենալ, ոչ թէ ինչպէս սուրը ձեռնի բռնած՝ հրամանատարներին հետ, այլ Հայաստանի կարգը պաշտպանողներն և խաղաղութիւնը ապահովողներին : Մինչև տեսնելիս ի հարկէ արդէն տեղեկացած էի նոցա ըւնաւորութիւնների և սովորութիւնների վրա, որոնց համեմատ ինձ հարկաւոր էր տեսակցութեան ժամանակ բաւականանալ միայն հետաքրք. ձեռքը ճակատին տանելով և փոխադարձ համոյր ուզարկելով : Բայց խոստովանում եմ անկեղծօրէն որ թւալի ու ծանր էի համարում տեսնել յաղթուած տէրութեան ներկայացուցիչների հետ նոցա սովորութեամբ, որ իմ աչքիս խոնարհացնող էր երևում, վստահ որոյ ներս մտածին պէս արագ և վստահ ուղղեցի իմ քայլերը դէպի պարթևութեան ծերունի Խամայի փաշան, որը իմ պէս վերականգնած յառաջացաւ մինչև տեսնակի կէտը և անմիջապէս սեղմեց իմ ձեռքը : Երբ մեկնեցի նորան, հրաւիրելով նստել իրան մօտ, նա դարձեալ անկատար չթողեց իր սովորութիւնը, այլ համարելի ձեռով զբաղեաւ տեսնեց՝ սուր, անհարկելի զվիթ, արժամաք ներս կանգնած արաբին սուրճը բերել : Ես շտապեցի մատուցանել նորան Լազարեվի ողջունը և խորին յարգանքը : « Ո, անչափ շնորհակալ եմ, ասեց նա, իմ մեծարդոյ եղբորից, որին ևս պատուում եմ բոլոր սրտից : » Այդ պատիւը անշուշտ փոխադարձ է, պատասխանեցի, երբ դուք, գերազանց, այդչափ բարձր պահեցիք պատերազմի դաշտում զինուորի և զօրավարի փառքը : » Անմիջապէս ստացայ շնորհակալութեան համոյր : « Սրտի վրտով իմացայ իմ մեծ եղբոր ընտանեկան անդադրութիւնը, շարունակեց նա, և արդէն հեռագրով խնդրել եմ նորոնից վեհանքն թողութիւն որ չկարո-

Ե՛ ՏՊԼՐԱՆԻ ԻՄԱՍԻՍ ԻՄԼԳՐՈՅ
ՉԱՆԹԱՆ ԵՐԲՈՒՄԵՆ